

ձեռք իւր եկեղեցւոյն յարած կ'երեւայ, վասն զի Սարգիս Հռոմ յանդիմանութիւն կը կրէ իր մեծերէն Սամուելի հետ հաղորդակցութեան մէջ ըլլալուն, դարձեալ Սամուէլ 1778ին ի Կ. Պոլիս Սարգսէն կը պահանջէ իր պահանջքն 100 դր. եւ զինք կը ներէ, եւ վերջապէս Սարգիս վ. 1783ին կ'ուզէ Խասգիւղ երթալ, եւ Սամուէլը խրատել ու դարձի բերել: Թէպէտ եւ Կ. Պոլսոյ Պալատի Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն մէջ պահուած Սամուէլ Լպ. ի աշխատասիրած գործը՝ «Կրթութիւն մտածական եւ քերականութեան աղօթից տետր», (Բարգէն վ., «Լոյս», 1905, էջ 967) շատ կաթողիկէական կը հնչէ:

Յովհաննէս Կոլոտ Պատրիարքի աշակերտ էր նաեւ «Ղազար վ. Պոնտոսեան, որ աւագնէ կոչուր» (Կոլոտ, անդ., էջ 71, 203): Ասիկայ Տրապիզոնի առաջնորդ ըլլալով՝ 1741ին Էջմիածին Ղազար Կաթողիկոսէն Տրապիզոնի եպիսկոպոս ձեռնադրուած է («Առաջնորդական եւ վկայական կոնդակը» տես Տաշեան, անդ., էջ 1031—2) եւ իր դասընկեր՝ Սարգիս Արքեպ. ին հաւատոյն աշակերտելով՝ 1760ին վենետիկ գացած է (Հայ-Վիեննա, էջ 343): Ղազար 1764ին Հռոմ կը գտնուէր. վասն զի Անտոնեանց Մատենադարանին թիւ ՂԲ. «Հաւաքածոյ» ձեռագրին սկիզբը կը կարդանք. «Գիրքս Սրբոյն Գրիգորի Նիւսապոլսոյն յիշատակ կարգեաց Լիւանանցի կրօնաւորացն Հայոց ուղղափառաց ի կարգէ սրբոյն Անդօնի մեծի զար-